ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ
ՀԱՍՑԵ՝ ք. ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32:
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 ● (091) 45 90 47 ● (077) 06 28 02

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2: Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 2000:

ISSN 1829-3468

# Սյունյաց երկիր

ՏԱՍՆՕՐՅԱ ԹԵՐԹ

Գինը՝ 100 դրամ:

ՇԱԲԱԹ
29 ՀՈՒՆԻՍԻ 2013Թ. ● № 18 (291)

www.syuniacyerkir.am

Փափսում են իրար ինչ-
որ անհայտ անուն,
Երազելով մի հարթ,
Մի անկաղնի բացատ...

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ



## Ինչո՞վ էին զբաղված մեր պատգամավորներն անցած մեկ տարում

**ԸՆՏՐՈՂԻ ԱՄԲԻՈՆ**

Մեկ տարի առաջ՝ 2012թ. մայիսի 6-ին, տեղի ունեցած ընտրություններում Սյունիքի մարզն ընդգրկող N37 եւ N38 ընտրատարածքներում Ազգային ժողովի պատգամավոր ընտրվեցին Հայկ Գրիգորյանն ու Վահե Հակոբյանը: Թե ինչու իշխանությունը հենց նրանց ցանկացավ տեսնել խորհրդարանում ու ամեն ինչ արեց, որ նրանք ստանան պատգամավորի մանդատ՝ թողնենք մի կողմ, մանավանդ որ ժամանակին այդ հարցերը հանգամանալից ու հրապարակավ քննարկվել են: Բայց կյանքը շարունակվում է, եւ հետաքրքիր է իմանալ, թե մեր պատգամավորներն ինչպես են (որքանով են) Սյունիքի մարզի, իրենց ընտրողների շահերը ներկայացնում (պաշտպանում) խորհրդարանում, ինչպես են կատարում պատգամավորի իրենց պարտականությունները: Եվ այդ հարցերի պատասխանն իմանալն ընտրողների սահմանադրական իրավունքն է: Պատգամավորներն էլ պարտավոր են իրենց գործունեությունն ավելի թափանցիկ դարձնել ու ժամանակ առ ժամանակ ընտրողներին հաշվետվություն տալ իրենց կատարածի ու չկատարածի մասին: Սրանք պարզագույն կանոններ են՝ օրենքով ամրագրված, որը հաշվի կառնենք ընտրաշրջանի մնացյալ չորս տարում:

Առաջնորդվելով այդ տրամաբանությամբ՝ հետընտրական շրջանում առաջին դիմումն ենք

Շարունակությունը՝ էջ 2

## Թամաշա

**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ**

Սյունիքի մարզի չափահաս բնակչության, ինչպես եւ մայրաքաղաքաբնակ սյունեցիների մի ստվար խումբ հայտնվել է Սյունիքի մարզպետի թափուր պաշտոնի հավակնորդների ինքնաստեղծ ցուցակում: Ընդ որում՝ հավակնորդների առաջին մասն ի հայտ է եկել սեփական ցանկությամբ ու հարայ-հրոցով, երկրորդ մասը՝ ընկերների, համախոհների, համերկրացիների ցանկությամբ, երրորդ մասը՝ սեփական ստորագրությունը հավերժորեն թաքցնող կամ կեղծող լրագրողների հնարանքով: Մյուս կողմից՝ մարզում այլեւս չկա մի քաղաք եւ գյուղ, որ մարզպետի իր թեկնածուն առաջադրած չլինի…

Կատակը՝ կատակ, բայց երբեք այսքան ողորմելի ու ծիծաղելի վիճակում չէինք եղել: Եվ այս վիճակը, այնուամենայնիվ, բազմաթիվ հարցերի ու եզրակացությունների տեղիք է տալիս:

Մեզ, օրինակ, հետաքրքրում է՝ իրո՞ք Սյունիքի մարզպետարանը (մարզպետի պաշտոնակատարը) Գորիսում ստորագրահավաք է ձեռնարկել, թե՞ ոչ: Ամենուր խոսում եւ գրում են այդ մասին, իսկ մարզպետարանը ո՛չ հերքում, ո՛չ էլ հաստատում է այդ տեղեկության իսկությունը: Բայց եթե մարզպետարանը (մարզպետի պաշտոնակատարը) նման ստորագրահավաք իսկապես նախաձեռնել է՝ առաջին հայացքից հօգուտ Սուրեն Խաչատրյանի վերադարձի, ապա մեծ սխալ է գործել եւ հերթական ուժգին հարվածը հասցրել ոչ միայն նախկին մարզպետին, այլեւ մարզի բարոյահոգեբանական մթնոլորտին ու քաղաքացիական համերաշխությանը: Հենց այդ ստորագրահավաքը դարձավ պատրվակ, որ մարզի մյուս համայնքները եւս մարզպետի սեփական թեկնածուի համար ստորագրահավաքներով ու աջակցության դիմումներով տարանջատվեն Սուրեն Խաչատրյանի ոչ միայն ներկայից ու ապագայից, այլեւ անցյալից:



Ստորագրահավաքների ու դիմումների շքերթը ցույց տվեց, որ Սյունիք հասկացությունը սոսկ պատմական կամ պատմաաշխարհագրական հասկացություն է այսօր, ինչպես 15-20 տարի առաջ: Փոխարենն ունենք Գորիսի, Կապանի, Մեղրու եւ Սիսիանի շրջաններ (ընդ որում՝ Կապանում կա Կապանի եւ Քաջարանի, Մեղրիում՝ Մեղրու եւ Ագարակի տարածք): Եվ շրջաններից ու տարածքներից յուրաքանչյուրը մարզպետին ներկայացվող չափանիշների մասին ունի իր պատկերացումը:

Ստորագրահավաքների ու դիմումների շքերթը մեկ այլ բացահայտում էլ կատարեց: Տասը տարի շարունակ մարզպետի աթոռի հանդեպ սեփական հավակնությունը չթաքցրած (եւ ժամանակ առ ժամանակ մայրաքաղաքային մամուլի միջոցով մեզ անընդհատ հիշեցնող) անձինք հայտնվել են ծիծաղելի վիճակում: Հօդս է ցնդել ինքնակոչ այդ հավակնորդների «բացառիկու-

Շարունակությունը՝ էջ 2

## «Սյունիքի պատմություն» գիրքը չի կարող բուհական դասընթաց համարվել

**10 ՏԱՐԻ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ ԲԱՆԱՎԵՃ**

2001թ. «Հրազդան» հրատարակչությունը լույս ընծայեց Գրիգոր Գրիգորյանի եւ Սերգեյ Հախվերդյանի հեղինակած «Սյունիքի պատմություն» գիրքը: Հրատարակվեց ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի երաշխավորությամբ: Իսկ ՀՀ ԿԳ նախարարության կրթական բարեփոխումների կենտրոնը երաշխավորեց այդ գիրքն օգտագործել իբրեւ բուհական համառոտ դասընթաց:

2002թ. «Սյունյաց աշխարհ» թերթում ծավալվեց «Սյունիքի պատմություն» գրքի հանգամանալից քննարկում: Թերթի 2002թ. N21-ում (20 օգոստոսի), N22-ում (30 օգոստոսի) եւ N23-ում (10 սեպտեմբերի) հրապարակվեց Ռոբերտ Էջանանցու քննախոսությունը՝ «Նկատառումներ «Սյունիքի պատմություն» գրքի վերաբերյալ»: Նույն թերթի 2003թ. N7-ում (30 մարտի), N8-ում (11 ապրիլի), N9-ում (21 ապրիլի) տպագրվեց նշված հեղինակի նոր քննախոսությունը գրքի մասին. վերնագիրը՝ «Պրոֆեսորական էկլեկտիզմ»:

«Սյունյաց աշխարհի» 2003թ. ապրիլի 30-ի N10-ում տպագրվեց (պատասխան խոսքի իրավունքով) պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գրիգոր Գրիգորյանի պատասխանը Ռոբերտ Էջանանցուն՝ «Անաղարտ պահպանենք Սյունիքի պատմությունը պատեհապաշտ քննադատներից» հոդվածը:

Այդ ժամանակ թերթի խմբագրությունը (խմբագիր՝ Ս.Ալեքսանյան) հանդես եկավ առաջարկությամբ՝ «Կողմերի ասելիքը համարում ենք սպառված» վերտառությամբ (30 ապրիլի 2003թ.): Առաջարկության մեջ նշված է՝ «Կարծում ենք խնդրո առարկան արծարծվել է բավականին ամբողջական՝ սպառելով կողմերի հիմնական ասելիքը»:

Խմբագրության առաջարկն այդ ժամանակ, կարծեք, ընդունեցին կողմերը, բայց… Տասը տարվա ընթացքում ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտն այդպես էլ չքննարկեց գրքի վերաբերյալ հնչած դիտողությունները, եւ գիրքը շարունակեց մնալ «բուհական համառոտ դասընթաց»: Նման առաքելություն այդ գրքին շնորհել էր ՀՀ ԿԳ նախարարության կրթական բարեփոխումների կենտրոնը, որը նույնպես տասը տարի շարունակ անտեսեց հնչած դիտողությունները: Հիմա նորից պատմության մի խումբ ուսուցիչներ եւ դասախոսները հարց են բարձրացրել՝ չթույլատրել (գոնե ուշացումով) բազմաթիվ գիտական սխալներով ու աղավաղումներով գրքի գործածումն իբրեւ բուհական ձեռնարկ: «Սյունյաց երկիրը» կփորձի օգտակար լինել բանավեճի կողմերին՝ հրատարակելով նոր քննախոսություններ՝ վաղուց խմբագրություն ներկայացված:

Առաջինը տպագրում ենք Ռոբերտ Էջանանցու «Թուղթ առ Արամ Քալանթարյան» հոդվածը (էջ՝ 4):

■

# Պատմությունը կրկնվում է

## ՎԱՆԴԱԼԻԶՄ

Արցախի եւ Հայաստանի Հանրապետության սահմանագլխին՝ Գորիս-Ստեփանակերտ ավտոմայրուղու վրա, 2005թ. կառուցվել է «Մայր հայրենիք» կոթողը (լուսանկարում): Կառուցվել է Սյունիքի նախկին մարզպետ Ս.Խաչատրյանի եւ Քաշաթաղի վարչակազմի նախկին ղեկավար Հ.Խաչատրյանի մտահղացմամբ ու «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ տնօրեն Մ.Հակոբյանի ֆինանսավորմամբ (մոտ 20 մլն դրամ): Նախագծի հեղինակը, ճարտարապետը եւ շինարարության ղեկավարը Սեւադա Զաքարյանն էր:

Հուշակոթողի մի բաղադրիչն էլ խաչքարն է՝ հետեւի մասում (արեւելահայաց կողմ) ունենալով այսպիսի արձանագրություն *«ՓԱՌՔ ՔԵԶ ՏԵՐ... ՓԱՌՔ ՀԱՅՈՑ ԲԱԶԿԻՆ, Օ՜ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴ ՔՈ ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՔՈ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ Է, 28.V. 2005Թ., ԱՍՏՈՒԾՈՅ ԿԱՄՈՔ ԵՒ ԱՐԴԵԱՄԲՔ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆԻ, ՔԱՇԱԹԱՂԻ ՄԱՐԶՊԵՏ Հ.ԽԱՉԱՏՐՅԱՆԻ, ՔԱՋԱՐԱՆԻ ԶԱՆԳԵԶՈՒՐ ՓԲԸ-ի ՏՆ. Մ.ՀԱԿՈԲՅԱՆԻ»:* Մի կողմ թողնենք իրողությունը, որ տեքստի որոշ բառեր կամ կապակցություններ այդպես էլ հասկանալի չեն:


«Մայր հայրենիք» հուշակոթողը՝ արեւմուտքից


Հուշակոթողի առանձին բաղադրիչ խաչքարը



Խաչքարի արեւելահայաց կողմի արձանագրությունը

Հունիսի 24-ին տեղեկություն տարածվեց այն մասին, որ հուշաքարի վրայից ջնջել են Սուրեն Խաչատրյանի անունը: Տեղի ունեցածը, շատերի կարծիքով, հունիսի 1-ի գորիսյան արյունահեղության յուրօրինակ արձագանք է:

«Իրավունք» թերթը 2013թ. հունիսի 25-ի համարում գրել է. *«Անշուշտ, կարելի է հասկանալ, թե ինչ աստիճանի զսպված ատելություն է կիրառվել..., որ մարզպետի պաշտոնանկությանը հետեւել է նաեւ քարի վրայից նրա անունը վերացնելու անզուսպ ցանկությունը: Բայց, այնուամենայնիվ, այդ արարքը վանդալիզմ է: ...Հուշակոթողը պատմության վավերագիր է, ուստի, հասկանալով հանդերձ, չի կարելի նման* արարքը խրախուսելի համարել»:

Ցավոք, պատմամշակութային հուշարձանի պղծման այս դեպքը եզակի չէ մեզանում: Եթե եկեղեցիները պղծում են գանձագողերը (այդ առիթով նույնիսկ քրեական գործ էր հարուցվել մեկ տարի առաջ Սիսիանում), ապա այս կամ այն առիթով կանգնեցված խաչքարերը կամ վիմական արձանագրությունները պղծում են վրեժխնդրության (կամ նախանձի) մղումով: 2003թ. Սիսիանի Գոռհայքի մերձակայքում էլ ջարդեցին ու փշուր-փշուր արեցին մի խաչքար, որ կառուցել էին «երախտապարտ սյունեցիները» (նախաձեռնող խումբը Սիսիանում էր)՝ ի պատիվ Սյունիքի առաջին մարզպետ, գեներալ Սուրեն Աբրահամյանի: Վանդալիզմի այդ ակտն այն ժամանակ մեծ արձագանք գտավ, եղան դատապարտողներ: «Առավոտ» թերթն էլ ծավալուն հոդված հրապարակեց «Այդ անունը ջնջել չի լինի» վերտառությամբ: Հանցագործները, սակայն, մնացին անհայտ, թեեւ ինքը՝ Սուրեն Աբրահամյանը, հիմնավոր կասկած ունի, թե ում հրահանգով եւ կոնկրետ ովքեր են ջարդել խաչքարը...

*Հիմա պատմությունը կրկնվում է, որը դատապարտում ենք եւ հույս հայտնում, որ նման արարքներ, գոնե այսուհետ, մեզանում տեղ չեն գտնի:*

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

# Թամաշա

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Սկիզբը՝ էջ 1

թյան», «օժտվածության» մասին փուչիկը: Ստորագրահավաքների ու դիմումների շքերթը ցույց տվեց, որ Սյունիքում գոյություն ունի ուժերի միանգամայն այլ դասավորություն, քան կարծում ու քարոզում էին ոմանք:

Ողորմելի վիճակում հայտնվեցին որոշ ՀՀԿ-ականներ՝ հայտարարելով՝ «Ես իմ կուսակցության զինվորն եմ եւ կանեմ այն, ինչ որ կորոշի կուսակցությունը»: Այդ մարդիկ, որ մինչ այդ էլ առնվազն երկու կուսակցության անդամ են եղել, ցավոք, այդպես էլ չեն գիտակցել, որ կուսակցությունը զինվոր չի ունենում, կուսակցությունն ունենում է որոշակի գաղափարներ դավանող անդամ՝ սեփական ուղեղով եւ սեփական աշխարհայեցողությամբ:

Իրավիճակի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ ժողովրդի ձայնի, մարդկանց դիմումի եւ ստորագրությունների հետ հույս են կապում նրանք, ովքեր տարիներ շարունակ թքել են մարդկանց ստորագրությունների եւ դիմումների վրա: Իսկ հիմա այդ մարդիկ ուզում են հորինովի հանրային կարծիքի օգնությամբ ինչ-որ պատրանք ստեղծել: Բացի այդ՝ ճիշտ է Արտուր Աթայանը, երբ հայտարարում է. «Չեմ կարծում, թե ինչ-որ մեկը ժողովրդի կամքը հաշվի կառնի»:

Որքան էլ տարօրինակ է, բայց խնդրո առարկային առնչվող դիմումների, կարծիքների, նամակների զգալի մասն անստորագիր է, ինչը բացառում է լուրջ վերաբերմունքն այդ փաստաթղթերի հանդեպ:

**Ստեղծված իրավիճակում, իհարկե, մտածելու բան էլ կա՝ այդ ի՞նչ ենք արել տարածքային կառավարման ինստիտուտի հետ, որ տեղից վեր կացողն իրեն կարող եւ ունակ է համարում՝ կառավարելու բազմաթիվ մարտահրավերների առջեւ կանգնած Սյունիքի մարզը:**

**Գոնե ուշացումով լրջանանք ու մեր մերկությունն այդքան հպարտորեն ու հետեւողականությամբ չցուցադրենք...**

**ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

# Ինչո՞վ էին զբաղված մեր պատգամավորներն անցած մեկ տարում

## ԸՆՏՐՈՂԻ ԱՄԲИՈՆ

Սկիզբը՝ էջ 1

հղում N37 եւ N38 ընտրատարածքների պատգամավոր Հայկ Գրիգորյանին ու Վահե Հակոբյանին: Պարոնա՛յք պատգամավորներ, հիմք ընդունելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը, խնդրում ենք ներկայացնել հաշվետվություն պատգամավորական մեկամյա գործունեության, նախընտրական ծրագրի (խոստումների) կատարման, սյունիքյան հիմնախնդիրների հանդեպ ձեր կողմից պահպանվող լռության պատճառների մասին՝ թերթի ընթերցողներին ներկայացնելու համար:

Իհարկե, մենք ունենք մեր դիտարկումներն այդ հարցերի վերաբերյալ, սակայն գերադասում ենք առաջ չընկնել եւ ձեր գործունեության մասին լսել ձեր իսկ շուրթերից:

Չենք կարծում, որ դրա համար պետք է դիմեինք ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանին կամ ձեր ընտրությունը երաշխավորած ՀՀԿ նախագահ Սերժ Սարգսյանին՝ նկատի ունենալով, որ նրանք դեմ չեն լինի պատգամավորի գործունեության թափանցիկության ու ընտրողների հետ կապի ապահովմանը:

Ձեր պատասխանն ակնկալում ենք ստանալ տասը օրվա ընթացքում, որը, առանց որեւէ միջամտության, կներկայացնենք ընթերցողին: Չպատասխանելն էլ պատասխան է, բայց դա չի նշանակում, որ օրակարգից կհանվի սյունեցի պատգամավորների գործունեությունը թափանցիկ դարձնելու մեր մտադրությունը:

**«ՍՅՈՒՆՅԱՑ ԵՐԿԻՐ»**

# Լուրեր

Հունիսի 5-ից «Եվրոպա» ՍՊԸ-ն սկսել է «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ վարչական եւ թերապեւտիկ բաժանմունքի մասնաշենքերի հիմնանորոգման աշխատանքները: Վարչական շենքում փոխվելու են կառույցի հատակն ու տանիքը, իսկ թերապեւտիկ բաժանմունքում, բացի նախատեսվածից, անհրաժեշտություն է ծագել ամրացման աշխատանքներ կատարել եւ երեսապատել շենքը: Ինչպես փոխանցեց ընկերության շինարարության բաժնի պետ Յուրա Նիկոլյանը՝ շինանորոգման աշխատանքների մեջ ընդգրկված է 64 հոգի, գլխավորապես՝ տեղացիներ: Նախատեսված է հիմնանորոգումն ավարտել երկու տարում, բայց ինչպես հավաստիացրեց Յու.Նիկոլյանը, իրենք նախանշվածից շուտ կավարտեն գործը: «Եվրոպա» ՍՊԸ-ն շահել է նաեւ Ագարակի զորամասում շինարարություն իրականացնելու մրցույթը:

Հունիսի 25-ին «Նախախորհրդարանի» ներկայացուցիչները Կապանի մշակույթի կենտրոնի հրապարակում կազմակերպեցին հանրահավաք: Ելույթ ունեցան Բաբկեն Ազատյանը, Ժիրայր Սեֆիլյանը, Սյուզան Սիմոնյանը, Հարություն Մեսրոբյանը, Եղիա Ներսեսյանը, Ալեք Ենիգոմշյանը եւ ուրիշներ: Նշվեց, որ «Նախախորհրդարանը» կուսակցություն չէ, այլ մարդկանց միավորում, շարժում, որի նպատակն է համահայկական շարժման ծավալմամբ Հայաստանում նորգաղութային կեղեքման գործիքի վերածված պետական կառավարման համակարգին զուգահեռ կառավարման գործող մարմիններ ձեւավորելու եւ լեգիտիմացնելու միջոցով վարչախմբի անցնցում հեռացումը եւ նոր որակի պետության ձեւավորումը: «Նախախորհրդարանի» ներկայացուցիչները կապանցիներին հորդորեցին համախմբվել եւ ազատագրել երկիրը՝ ձեւավորելով հայկական պետություն, այլ ոչ թե ղեկավարություն, որը ծառայում է օտար երկրների շահերին:

ԱԱԾ-ի քննչական վարչությունում լրտեսության վերաբերյալ քննվող քրեական գործի շրջանակում իրականացված քննչական եւ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում հունիսի 22-ին ձերբակալվել է զորամասերից մեկի պայմանագրային զինծառայող, Կապան քաղաքի բնակչուհի, չամուսնացած, 1982թ. ծնված Մանե Արտաշեսի Մովսիսյանը: Առկա տվյալների համաձայն՝ Մովսիսյանն Ադրբեջանի հատուկ ծառայություններին է փոխանցել ծառայության ընթացքում իրեն հասանելի դարձած ՀՀ վերաբերյալ ռազմական բնույթի պետական եւ ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկություններ:

«Վորլդ Վիժն Հայաստան» ՄԲԿ-ի ԱՄՆ ՄԶԳ-ի ֆինանսավորմամբ՝ Սյունիքի, Շիրակի, Տավուշի մարզերում եւ Երեւանում իրականացվող «Շահագրգիռ կողմերը միասին հանուն Հայաստանում երեխաների պաշտպանության համակարգի հզորացման» եռամյա ծրագրի շրջանակում հունիսի 22-23-ին Աղվերանում տեղի ունեցավ ամփոփիչ հանդիպում, վերապատրաստում, որի ընթացքում լրագրողներին ներկայացվեցին ծրագրի արդյունքները: Գլխավոր արդյունքներից է այն, որ երեխայի խնամքի եւ պաշտպանության ութ հաստատության 700 երեխայից 172-ը վերադարձել է ընտանիք: Քննարկվեցին նաեւ մի շարք հարցեր լրագրողների եւ սոցիալական աշխատողների համագործակցությունն արդյունավետ եւ շարունակական դարձնելու նպատակով:

È² ´ÆðÆÜÂàê

# Շարունակվում է Գայանե Դավթյանի ոդիսականը

## Նրա ազատազրկման մասին դատական ակտի կատարումը չի հետաձգվի, եթե ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն այլ որոշում չընդունի

■ Ինչպես արդեն տեղեկացրել ենք, Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012թ. հոկտեմբերի 5-ի դատավճռով Սիսիան քաղաքի բնակիչ Գայանե Դավթյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով եւ դատապարտվել չորս տարվա ազատազրկման:

Ամբաստանյալի պաշտպանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով գործը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2013թ. մարտի 6-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012թ. հոկտեմբերի 5-ի դատավճիռը:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի հիշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալի պաշտպան Մ.Թորոսյանը: Նա խնդրել է վճռաբեկ բողոքն ընդունել վարույթ, բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013թ. մարտի 6-ի որոշումը եւ գործն ուղարկել նոր քննության կամ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա պատիժը պայմանականորեն չկիրառել: 2013թ. մայիսի 14-ին, սակայն, ՀՀ վճռաբեկ դատարանը որոշել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշման դեմ բողոքը վերադարձնել՝ նշելով, որ որոշումը վերջնական է ու ենթակա չէ բողոքարկման:

■ Գայանե Դավթյանի խնդրին անդրադարձել ենք «Սյունյաց երկրի» 2013թ. մայիսի 3-ի, ինչպես եւ հունիսի 1-ի համարներում: Վերջին հրապարակումը «Սիսիանում չեն հավատում, որ Գայանե Դավթյանն ազատազրկվել է հանուն Հայաստանի Հանրապետության եւ սպասում են ՀՀ նախագահի միջամտությանը» վերտառությամբ հոդվածն էր. նման եզրակացության համար հիմք էր ծառայել 3 հազարից ավելի սիսիանցիների նամակը՝ հղված ՀՀ նախագահին: Թե ինչ ընթացք է ունեցել նամակը՝ տեղյակ չենք:

Մինչդեռ Գայանե Դավթյանը մայիսի 26-ից շարունակում է մնալ հիվանդանոցում՝ ի հայտ եկած առողջական խնդիրների պատճառով, նախ՝ «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում, հունիս 4-ից՝ Երեւանի N2 բուժմիավորումում, որտեղ նրան հունիսի 10-ին ախտորոշել են «Արյան շրջանառության անբավարարության ՎԲԱ-մ տրանզիտոր իշեմիկ գրոհ նույն ավազանում: Ասթեո վեգետատիվ համ-շ» հիվանդությամբ: Եվ այս իրողությունը հաշվի առնելով՝ Գայանե Դավթյանի ամուսին Ներսես Խաչատրյանը դիմել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ ազատազրկման դատապարտված անձի նկատմամբ կայացված դատական ակտի կատարումը ՀՀ քրեական օրենսգրքի 431-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին մասով սահմանված կարգով հետաձգելու խնդրանքով՝ մինչեւ Գայանե Դավթյանի կազդուրվելը: Հունիսի 24-ին Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը՝ նախագահությամբ դատավոր Նապոլեոն Օհանյանի, մասնակցությամբ դատախազ Գարիկ Դանիելյանի, դռնբաց դատական նիստում քննության է առել Ն.Խաչատրյանի ներկայացրած միջնորդությունը՝ դատական որոշման կատարումը հետաձգելու մասին: Որոշվել է՝ մերժել Ն.Խաչատրյանի միջնորդությունը՝ դատապարտյալ Գայանե Դավթյանի՝ որպես ազատազրկման ենթակա անձի նկատմամբ կայացված դատական ակտի կատարումը ծանր հիվանդության պատճառով հետաձգելու մասին: Դա նշանակում է, որ Գայանե Դավթյանի ազատազրկման վերաբերյալ որոշման կատարումը չի հետաձգվի: Սակայն այդ որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ հրապարակվելու պահից տասնօրյա ժամկետում: Եվ, ինչպես տեղեկացրեց Ներսես Խաչատրյանը, մեղադրվող կողմը Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի տվյալ որոշումն անպայման կբողոքարկի: Մի խոսքով՝ Գայանե Դավթյանի ճակատագիրը կրկին քննարկման առարկա կդառնա ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում:

■ Մեղադրվող կողմը շարունակում է հավատ չընծայել Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի եւ հատկապես Սյունիքի մարզի դատախազության՝ հանձին դատախազի տեղակալ Հայկ Կարապետյանի, նկատմամբ, ով ի սկզբանե եղել է գործի նախաքննությունը եւ դատավարությունը հսկող դատախազ: Հունիսի 24-ի դատական նիստում դատախազության ներկայացուցիչն արդեն ոչ թե Հայկ Կարապետյանն էր, այլ Գարիկ Դանիելյանը, ինչը, սակայն, մեղադրվող կողմի վստահության դեֆիցիտը չմեղմեց: Մեղադրվող կողմը շարունակում է դատական ատյանի՝ գործին առնչվող յուրաքանչյուր քայլի մեջ տեսնել Հայկ Կարապետյանի ստվերը: Թե ինչու է այդպիսի անվստահություն իշխում մարզի դատախազության ներկայացուցչի հանդեպ, դա խոսակցության այլ թեմա է, որին երբեւէ պետք է անդրադառնալ: Իսկ հիմա փորձենք, վեր կանգնելով կողմերի փոխադարձ հակակրանքից, պարզել, թե ինչու, այնուամենայնիվ, Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը չհամաձայնեց, որ հետաձգվի Գայանե Դավթյանի պատժի կրումը, քանի դեռ նա հիվանդանոցում է:

■ Խնդրո առարկա հարցը կարգավորվում է «Կալանավորված անձանց եւ դատապարտյալների բուժսանիտարական եւ բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու, առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու եւ այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 26-ի N825-Ն որոշմամբ: Դրանով հաստատվել է պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունների ցանկը (հավելված 2): Այդ ցանկում մեզ հետաքրքրում է «Նյարդային համակարգի եւ զգայարանների


Գայանե Դավթյան


Նապոլեոն Օհանյան, Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր

հիվանդություններ» բաժնի 20-րդ կետի առաջին ենթակետը: Ի՞նչ է գրված 20-րդ կետում. «Գլխուղեղի եւ ողնուղեղի անոթային հիվանդություններ՝ արտահայտված ուղեղի կայուն օջախային խանգարումով (հեմիպլեգիա եւ պարապլեգիա, խոր հեմիպարեզներ եւ պարապարեզներ, տարածության եւ ժամանակի նկատմամբ կողմնորոշման խանգարում, ակինետիկ-ռեգիդ սինդրոմ)»: Իսկ ահա ինչ է գրված 20-րդ կետի 1-ին ենթակետում՝ «Ուղեղի արյան շրջանառության հեմոռագիկ, իշեմիկ կամ խառը սուր խանգարումներ»:

Պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունների ցանկում այս կետն ու ենթակետը մեզ հետաքրքրում են այն պարզ պատճառով, որ «Թիվ 2 բուժմիավորում» ՓԲԸ-ի տեղեկանքում գրված ախտորոշումն այսպես է ձեւակերպված՝ «Արյան շրջանառության անբավարարության ՎԲԱ-մ տրանզիտոր իշեմիկ գրոհ նույն ավազանում: Ասթենովեգետատիվ համ-շ»:

Դատարանը գտնում է. **«Նշված ախտորոշումը կարող է վկայել միայն Գայանե Դավթյանի մոտ տվյալ հիվանդության առկայության մասին: Սակայն, այդ հիվանդության ծանր լինելու եւ պատիժը կրելուն դրա խոչընդոտելու մասին դատարան ոչ մի թույլատրելի եւ բավարար ապացույց չի ներկայացվել, որպիսին կարող է լինել համապատասխան փորձագետի կամ բժշկական հանձնաժողովի եզրակացությունը եւ այլն: Վերը նշված պատճառաբանությամբ դատարանը գտնում է, որ միջնորդությունն անհիմն է եւ ենթակա մերժման»:**

Դատարանի այդ փաստարկումն անհիմն է համարում միջնորդող կողմը՝ հայտարարելով՝ **«ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդված 431-ը (Դատական որոշման կատարման հետաձգումը) չի սահմանում, որ միջնորդությունը պետք է հիմնված լինի համապատասխան փորձագետի կամ բժշկական հանձնաժողովի եզրակացության վրա: Նման եզրակացություն պահանջվում է այն դեպքում, երբ խոսվում է հոդված 432-ի մասին (Պատիժը կրելուց ազատելը հիվանդության պատճառով): Մեր պարագայում բավական է միայն հիվանդության մասին տեղեկանքը՝ տրված բուժմիավորման կողմից»:**

■ Թե կողմերի փաստարկներն ու պատճառաբանությունները որքանով են ճիշտ, կպարզի ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը: Մի քանի նկատառում, այդուհանդերձ, չենք կարող չհայտնել, թեեւ հունիսի 24-ի դատական քննության վերլուծության հավակնություն չունենք:

**Առաջին**՝ Ներսես Խաչատրյանի միջնորդությանը կից ներկայացված տեղեկանքը՝ տրված 10.06.2013-ին «Թիվ 2 բուժմիավորում» ՓԲԸ-ի կողմից, որ պետք է որոշիչ դեր խաղար դատական քննության ընթացքում, առնվազն գրագետ չէր (այդպես են բնութագրում մասնագետները) եւ լիովին չէր համընկնում ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 26-ի N825-Ն որոշմամբ հաստատված ցանկում նշված հիվանդությանը (հավելված 2-ի 20-րդ կետ եւ այդ կետի 1-ին ենթակետ): Այսինքն՝ դա այն ախտորոշումը չէր, որ կարող էր համարվել ծանր հիվանդություն՝ պատիժը կրելուն խոչընդոտող:

**Երկրորդ**՝ դատարանը, որքան էլ զարմանալի է, իր որոշումը կայացնելիս հիմք չէր ընդունել այն իրողությունը, որ միջնորդությանը կից ներկայացված բժշկական տեղեկանքը խնցելի է ու ոչ համոզիչ: Դատարանն այլ պատճառաբանություն էր դրել որոշման հիմքում՝ **«…ոչ մի թույլատրելի ու բավարար ապացույց չի ներկայացվել, որպիսին կարող էր լինել համապատասխան փորձագետի կամ բժշկական հանձնաժողովի եզրակացությունը եւ այլն»:**

Եվս մեկ անգամ նշենք, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդված 431-ը նման փաստաթուղթ ներկայացնելու անհրաժեշտություն չի նշում, ինչի համար էլ միջնորդող կողմը ներկայացրել է տեղեկանք եւ ոչ թե փորձագետի կամ բժշկական հանձնաժողովի եզրակացություն:

Եվ եթե դատարանը հենց եզրակացությունն է ցանկացել գործի հիմքում տեսնել, ապա պետք է միջնորդող կողմին որոշակի ժամանակ տար՝ նման փաստաթուղթ ներկայացնելու համար, այլապես միջնորդող կողմն ինչի՞ հիման վրա պետք է ենթադրեր, որ եզրակացությունն է ցանկալի հիմք դատարանի համար:

**Երրորդ**՝ յուրաքանչյուր դատավճիռ (դատական որոշում), որքանով հասկանում ենք, պետք է նախեւառաջ վստահություն եւ հավատ ներշնչի կողմերին, այլապես դրա հասարակական նշանակությունը նվազում է: Այս դեպքում դատական քննությունը, կարծում ենք, ավելի հավատ կներշնչեր, եթե… Ի վերջո կողմերը բանավիճում էին մեկ հարցի շուրջ՝ ներկայացված բժշկական տեղեկանքը համապատասխանո՞ւմ է կառավարության 2006թ. մայիսի 26-ի N825-Ն որոշմանը, թե՞ ոչ: Երեւի թե մասնագիտական (փորձագիտական) գնահատականն էր դատական նիստում բացակայում, որն ամեն ինչ կդներ իր տեղը, թե չէ հնչած ելույթները (նաեւ դատախազի ելույթը) առավելագույնս մերկապարանոց էին եւ խնդրո առարկային գրեթե չառնչվող: Իսկ փորձագետ կարող էր հրավիրել (կամ փորձագետի եզրակացություն պահանջել) միայն դատարանը:

**Չորրորդ**՝ հունիսի 24-ի դատական նիստը վարում էր Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր, քրեական գործեր քննող Նապոլեոն Օհանյանը, ով, խոստովանենք, մի քանի տարի շարունակ արժանացել է «Տարվա լավագույն դատավոր» մրցանակին, ով որոշակի ճանաչում ունի հանրապետությունում: Այդուհանդերձ Գայանե Դավթյանի պատիժը հետաձգելու մասին միջնորդությունը քննելու առաքելությունը պետք է հանձնարարվեր (կարծում ենք) մեկ այլ դատավորի, ով միջնորդող (մեղադրվող) կողմին ավելի վստահություն կներշնչեր, մանավանդ որ մեղադրվող կողմն ի

Շարունակությունը՝ էջ 7

Սյունյաց երկիր
www.syuniacyerkir.am

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ■ ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ
ՇԱԲԱԹ ● 29 ՀՈՒՆԻՍԻ 2013Թ ● № 18 (291)

## 10 î ²ðÆ Þ²ðàôÜ² Î ì àÔ ´ ²Ü² ì ºÖ

# «Սյունիքի պատմություն» գիրքը չի կարող բուհական դասընթաց համարվել




1. Թուղթ առ Արամ Քալանթարյան

**2003թ. ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի տնօրեն**

Կարդացի Քո հմ. 2470-59 գրությունը, որը որպես իմ մի հրապարակմանը վերաբերող խնդրի թյուրըմբռնում ու երկչոտ կոծկում, ուղարկել ես ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղարին:

Ցավալի է, որ այն բավականին անլուրջ է եւ գրագիտությամբ չի փայլում: Քո կոչումներին ու պաշտոնին ոչ հարիր, գիտակցաբար շրջանցել ես հետաքրքրություն ներկայացնող իմ խնդրանքը ԳԱԱ նախագահին. այն է՝ քննություն նշանակել պատմական գիտությունների դոկտոր Գրիգորյանի (այսուհետ՝ պգդԳ) եւ նրա գավառական գործակցի ցածրորակ գրքի, նրանց լրագրային-դիլետանտական հակադարձումների վրա:

Հասկանալի է Քո պահվածքը. երեւակայական բարիկադի մի կողմում երկարամյա գործընկերներդ են, մյուսում՝ գյուղական ուսուցիչը: Եվ, գիտականության հերն անիծելով, սեւին սպիտակ ես ասել: Չեմ կասկածում, որ, եթե տնօրենիդ հաճելի լինի, ուզածդ գրչակին Հերոդոտոս կամ Խորենացի կհռչակես:

Ակնբախ է, որ ուշադիր չես կարդացել խնդրո առարկա գիրքը եւ իմ հոդվածաշարը: Ոչ այլ ոք, այլ Դու պետք է կռահեիր, որ իմ գրածը սոսկ գրախոսություն չէ եւ ոչ էլ՝ բանավիճային ակնարկ: Քննախոսություն եմ գրել, տրակտատ, եւ թերթն էլ համահունչ խորագիր է դրել: Գրախոսությունն ու քննախոսությունը տարբերելու համար պետք չէ պգդ լինել: Մեր ժամանակներում գրախոսություն կոչվածը մեծամասամբ պատվերների շրջանակում է: Ինձ ոչ ոք չէր պատվիրել: Գրել եմ՝ հատկապես գիտնականի Քո տեսակի համար, որ վասն պատմագրության վարկի փառավորվես, հաճույք զգաս քննարկման առիթի համար եւ զորանաս՝ Քո գիտական տանը առկա գորշության դեմ պայքարելիս:

Չեմ կարող հուսալ գիտնականի Քո խղճին: Իմ դիտարկումներին ոչ մի հակափաստարկ չես բերում, հերքումների փորձ չես անում եւ անհիմն գնահատումներ ես հրամցնում ակադեմիկոսին, խաբում նրան:

Քո համբավի գիտնականն այլ դիրքորոշում չպետք է ունենա, քան իմ եռագրությանն ուշիմ հետաքրքրությամբ հետեւելը: Դա Քեզ պետք է, եւ միայն այդպիսի բաներն են Քեզ պետք: Գրաքննադատությունը պետք է կարեւորի Քո՝ որդիքի գիտնականը եւ օվսաննա երգի գրաքննադատի առջեւ: Գիտության Բանն անձանց մեջ չէ, այլ՝ գիտության նյութի: Մինչեւ ե՞րբ պետք է Տիրոջը 30 արծաթով մատնողներ լինեն:

Առանց էությունն ըմբռնելու, իմ աշխատանքն «անպատշաճ» ես համարել, խրատատուի դեր ստանձնել: Մեկն էլ լինի՝ Քեզ խրատի: Ուշքի եկ ու տես այդ տխրահռչակ գրքի շարադրանքի հակասականությունները, հակագիտական մտքերը, թուրքամետ հավակնությունները, անհեթեթ քարտեզն ու լուսանկարները, զավեշտական մեկնաբանությունները: Եթե դժվար է, այդ ամենին զորավիգ են իմ երեք հրապարակումները եւ անտիպ 2-ը, որոնք պիտի հայցես ինձնից:

Ի՞նչ եք երկուսով կպել ուշադրություն շեղող մանրուքներից՝ վրիպակ, հա՛ վրիպակ: Իսկ ի՞նչ ասել է վրիպակ: Տառասխա՞լ: Ո՞վ է տեսել՝ գրքում 100-ից ավելի վրիպակ: Բայց խոսքը ոչ թե վրիպակի, այլ՝ գիտական շառլատանության մասին է:

Կուրորեն հետեւելով պգդԳ-ի սխալ դիրքորոշմանը, իմ մատնանշած թերությունները մի կողմ ես դրել ու հենվել անձնական փոխհարաբերությունների վրա: Կարծես, հեռվանց, մի երեւակայական թշնամի է խածում Քեզ: Դա այդպես չէ: ՊգդԳ-ն իմ գրածը թյուրիմացաբար հարձակում է կարծել եւ, իր տարիքին համեմատ, հուզական վիճակի մեջ ընկել, շրջանցել իմ զարգացումներն ու մի լավ փնովել: Մարդ է, կարելի էր սպասել: Մոռանալով, որ վրիպակ հայտնագործողի հետ է կռվում, մեջբերումներ է դրել Սաղմոսից, Եղիշեից, անդրօվկիանոսյան հայագետից: Դա դոնքիշոտյան եղանակ է:

Տպավորություն ստեղծելով, թե, իբր, վրիպակների համար են իրեն քննադատում, անցել է գռեհկախոսությանը եւ ինչեր ասես, որ չի գրել էջանանցու հասցեին: Մի՞թե դրանից պատմագիտությունը շահում է: Եվ քաջություն չի ցուցաբերել՝ անդրադառնալու իմ առաջնահերթ փաստարկներին: Կպել է երկրորդականներին եւ ցավալիորեն, Քո աչքի առաջ, ընկել նոր անհեթեթությունների մեջ: Նրա լրագրային հոդվածների արտառոց սխալներն ուշիմ դպրոցականներն էլ կարող են հայտնաբերել: Ի դեպ, վերջերս մարզային թերթում մի հոդված է տպագրվել Հայր Ստեփանոսի վերաբերյալ, որում թեական մտքերի եւ անգիտությունների պակաս չի զգացվում:

Ըստ Քո գրության, ինստիտուտիդ տնօրինությունը էջանանցու նյութերին ծանոթանալուց հետո է ըմբռնել «Սյունիքի պատմություն» գրքի արժեքը:

Փհե՜…

Բայց չէ՞ որ գրքի վրա ինստիտուտի գրիֆն է եւ հավաստված է, որ ստորագրվում է գիտխորհրդի որոշմամբ: Այդ ի՞նչ գիտխորհուրդ է, որ ուսանողներին սխալների ու անհեթեթությունների արտառոց շտեմարան է մատուցել:

Տեսնում եմ. գիտական միջավայրը Քո ինստիտուտում այլակերպման դրոշմ է առել: Չես համարում, որ գիտության վարկի համար վեճից ավելի լավը սխալների վերհանումն է: Ուրախություն պետք է պատճառի, երբ մատնանշում են սխալները, որովհետեւ առաջընթացի գաղտնիքը դրանում է: Ի՞նչ կարիք կա՝ ետնախորքում անձնականը տեսնել: Ա՛յ, Քեզ թվում է, թե պգդԳ-ին նսեմացնելու, նրա անձն ու գործունեությունը պախարակելու մտայնություն ունեմ: Սթափ եղիր, դա այդպես չէ: Դրան գնացել ես՝ առանց ինձ հետ զրուցելու, ապակողմնորոշվելով թերթի «փոխադարձ վիրավորանքներ» խոսքից:

Իրականում, երբ գրում էի 1-3-րդ հոդվածները, համոզված էի գրքի հեղինակների լուրջ հակադարձման մեջ. սիրով կընդունեն, շնորհակալ կլինեն իմ համագործակցությունից: Հետազոտողն ի բնե այդպիսին պետք է լինի:

Երկրորդ հեղինակը, որի անմտությունների պատճառով առաջինը ցեխի մեջ է ընկել, թերթում հանդես եկավ իշարածին սազող պատասխանով: Կարդացեք պրոֆեսորներով եւ հետեւություն արեք, թե ինչ պատրաստվածության տեր գորշությունն է ձեռք զարկում պատմագրությանը: Հեղինակը, որը, զորօրինակ, չգիտի, որ գրերի գյուտից առաջ թարգմանիչներ են եղել, խեղկատա՞կ չէ:

Երբ ասում եմ՝ այսինչ բանը սխալ է, դա չի նշանակում, թե վիրավորում եմ անձը կամ փնովում գործունեությունը: Գիտնականը սխալ էլ կանի, սխալն էլ կուղղի: Նա գյուտի համար մերկ պիտի վազի Սիրակուզայի փողոցով, այրվի ինկվիզիցիայի խարույկի վրա, Սբ Մեսրոպի պես իր անձը մոռացած՝ ճգնի եւ գիտության բանը համբերության նյութ դարձնի…

Բայց պգդԳ-ն հակոտնյա է այդ արժեքներին: Նա իսկույնեւեթ անցավ անձնապաշտպանության դիրքերը, սկսեց հոխորտալ, դատարանով սպառնալ ու տուրք տալ զազրախոսությանը: Տառապում է այն մտայնությամբ, թե այսօր գիտության մեջ ամեն ինչ բարձիթողի վիճակում է, խոտանարարի ձեռքը չէն բռնում, եւ ուզածդ խզբզանքը կարելի է մատուցել որպես տրակտատ:

Ցայժմ էլ չի հասկանում, որ դասախոս կոչվածը գյուղական դպրոցի տնօրենի համեմատ՝ գիտամշակութային նորօրյա ընկալումների մեջ, այնքան էլ երեւելի հեղինակություն չէ:

Քննախոսության մեջ, որպես տարիքով կրտսեր, պահպանել եմ բարեկրթության չափանիշները, անգամ՝ նրան դրել մեծերի պատվանդանին: Եւ զարմանալին այն է, որ մինչեւ հիմա նրան այդ բարձունքից չեմ իջեցրել: Բանն այն է, որ նա իմ առաջնահերթ հարցադրումներին տակավին չի պատասխանել եւ խուսանավում է:

Եթե փորձել է քննարկում անել, ապա միայն կմկմացել է եւ, շեղվելով բուն նյութից, արտակառուցվածքային-ամբիցիոզ «գոհարներ» շարել՝ թվարկել է իր կոչումներն ու աշխատությունները, անգամ՝ մաթեմատիկայի դասավանդման վերաբերյալ անհամություններ դուրս տվել:

Միայն այն փաստը, որ նա հրապարակավ կեղծել է Չամչյանի եզրահանգումները, եւ այն իրողությունը, որ գրաբար բնագրերը անգրագետ է թարգմանել, բավական են, որ նա ընդունի իր պարպվածությունը:

Սխալներն ընդունելը դառնագին է:

Մոտ անցյալի մեր մեծերը շատ են վիճել, բայց երբեք չեն գռեհկաբանել, եւ շատ դեպքեր են հայտնի, երբ սուր բանավեճ ունեցողները անհիշաչար նստել են թեյի սեղանի շուրջը:

Մեծաց վարքն առաջին հերթին դաս եւ պատգամ պետք է լինի պգդԳ-ի համար, որովհետեւ մեծ-ի հորջորջմանն ինքն է հավակնում:

Առաջացող տարիքում, պարզ է, զգացմունքային մարդուն չեն ասում, թե աչքիդ վրա ունք կա: Բայց դա, կարծում եմ, մեր գյուղում է հարմար եւ ոչ՝ գիտության այրերի միջավայրում: Ի՞նչ է, մի քանի վրիպակ է թույլ տվե՞լ, որ ականջին շշնջայի: Արդ, թող ինքն ու իշարածը ամոթով մնան: Պատմագրության հարգին դա պատշաճ է:

Տնաքանդություն է, երբ գիտնականն առաջնորդվում է անձ-անձնականով: Օիծաղ հարուցող բաներ ունի: Օրինակ, պատմագիտական-գրաքննադատական բնույթի հոդված է ձեռնարկում՝ իր տիտղոսների մեջ ամրակայելով, որ ինքը Կապանի պատվավոր քաղաքացի է: Իսկ ու՞ր մնացին, ասենք, այսինչ կուսակցության հարելը, այնինչ ղեկավարին շնորհակալ... ղոմելը կամ թե արհմիության անդամ լինելը:

Ո՞վ կպնդի, թե «Սյունիքի պատմության ուսումնասիրման գործում մեծ վաստակ ունեցող մասնագետ, պգդ, պրոֆեսոր, տասնյակ տարիների դասախոս»-ը սխալների ընդունակ չէ: Սխալական են ամենքը: Եւ պետք է ազնիվ ու վեհանձն լինի՝ ընդունելու դրանք: Մի՞թե ենթադրում ես, որ նրա աշխատությունները փայլում են գիտականությամբ: Այս հարցադրումը Քեզ չպետք է հանգիստ տա: Առանց նրա անձն ու գործունեությունը վիրավորելու, առաջիկայում, երբ ժամանակ գտնեմ, կառանձնացնեմ այն ամեն ոչ գիտականը, որ նա ունի թերթերում թվարկած իր աշխատություններում եւ մամուլի հրապարակումներում: Եւ Ինքդ պետք է ինձ կողմնորոշես, թե ում ներկայացնեմ:

Ինչու՞ ես խորշում «Ռ. Գրիգորյանի ծայրահեղ հետեւողականություն»-ից եւ այն համարում անհասկանալի (գրում ես՝ անհասկականալի): Իմացած լինես, որ դա մանկավարժի հոգեւոր բարեմասնություն է, մասնագիտության պարտադիր տարր: Եթե Ինքդ ծայրահեղ հետեւողական չես, ապա դա աղետ է Քո պաշտոնի համար:

Ծայրահեղ հետեւողական եմ, որ քննարկումների ու կոլոքվիումների շրջանակ բացվի, որ իմ երկրամասի պատմությունը դիլետանտները չգրեն, որ գիտության իշխանավորը ճանաչի խոտանարարին ու նրա վրա մատ թափ տա:

Ու նաեւ. Քեզ դուր չի գալիս, որ նամակներ եմ գրել:

Միամիտ մարդ, նամակը գիտնականի ու գիտության կերակուրն է ու ցանկալի ատրիբուտը: Գոնե մի մոռացիր, որ Խորենացու երկի հիմքում շատ նամակներ կան: Դու եւ բոլոր գիտունները պետք է խրախուսեն նամակը, միշտ նամակի սպասեն: Հետո ի՞նչ, որ այն կարող է այս մեկի պես դույզն-ինչ դառնավուն լինել:

Գրությանդ վերջին պարբերությունը հույժ բնորոշ է Քո մտածումին:

Քննարկվող խնդրի վերաբերմամբ ինչպե՞ս կարելի է բավարարվել մարզային թերթի «ցայսօր եղած հրապարակումներով»: Եւ դա, որպես ծանձրույթի հավաստում եւ որպես պրոֆեսորական եզրահանգում, ներկայացնում ես ԳԱԱ փոխնախագահին:

Մարզային թերթը գիտական հաստատություն չէ, առավել եւս՝ վերադաս չէ Քո ղեկավարած ինստիտուտի համար: Նա հրապարակումներն ընդհատել է իմ դժկամ համաձայնությամբ, որովհետեւ պգդԳ-ն բացահայտել էր իր անպարկեշտ վարքը, որը ծանոթ չէր սյունեցի ընթերցողին: Անշուշտ, հնարավոր չէ, որ «տասնյակ տարիների դասախոսի» նման հավակնոտ ինքնաբացահայտումը միայն էջանանցու առիթով լինի:

Ընթերցողը գիտի, թե ինչու է պգդԳ-ն էջանանցուն «դատարկաբան, անգրագետ» անվանել: Դա նրա գոթական դիմակն է, որով երբեւէ նեմեցները վախեցնում էին հակառակորդին: Արդ, մարդը տառապում է սադիզմով, եւ նրան պետք է օգնության ձեռք մեկնել: Որպես ամփոփում, ունեմ եւս մի քանի առաջարկություններ.

1. «Սյունիքի պատմություն» գիրքը մերժել որպես գիտական աշխատություն, ուսանողության համար համարել ոչ հանձնարարելի:

2. Էջանանցուն հրավիրել գիտխորհուրդ եւ ունկնդրել նրա դասախոսությունը պգդԳ-ի եւ նրա գործակից ծայրագավառցու հրապարակումների գիտականության վերաբերյալ:

3. Հարցը լայն պլանով քննարկել գիտական ամսագրերից մեկում՝ սկսելով էջանանցու հիմնարար հոդվածով:

4. Ա.Ք.-ի՝ ակադեմիկոս-քարտուղարին ուղարկած մակերեսային եզրահանգումը փոխարինել ճշմարիտ զեկուցագրով (նախագիծն ինձնից՝ ֆաքսով):

5. Անմակարդակ գիրք հրատարակելու, քննադատությունից ֆիասկոյի մեջ ընկնելու եւ պրոֆեսորին ոչ վայել նոր սխալներ թույլ տալու համար կարգի հրավիրել ինստիտուտի աշխատակցին:

6. Որպես բարեփոխումների չափորոշիչ, ինստիտուտում կարեւորել գրաքննադատությունը, հրաժարվել «արժեզրկող, նսեմացնող» «թշնամիներ» փնտրելու փոքրոգությունից ու մտայնությունից:

Մեր երանելի վարդապետներից մեկն այսպիսի խոսք ունի. «Դու մերժեցիր գիտությունը, ես էլ քեզ եմ մերժում»:

… Երբեք մի մոռացիր, որ պրոֆեսորն ու գյուղական ուսուցիչը նույն ազգի զավակներն են, ու երկուսից էլ պետք է սպասել անկեղծ սիրահարվածություն ու ակնածանք հայրենական գիտության հանդեպ:

**25 հոկտեմբերի 2003թ.**

**ՌՆԾԳ**

¼´ àê ² Þðæàô ÂÚàôÜ



# «Ով չի տեսել Գորիսը, չի տեսել աշխարհ»



**ԱՐԵՎԻԿ ԱԲԵԼՅԱՆ**

Մայքլ Պոլեցկին շատ է սիրում շրջել աշխարհով մեկ: Նրա հերթական այցելությունը Հայաստանն էր, իսկ օգնելու եւ հանգստանալու համար ընտրել էր Գորիսը: Ամեն Աստծո առավոտ Մայքլն իր օրը սկսում է Լաստի խութ բարձրանալով: Սիրում է Սյունիքը, նրա բնությունն ու վեհաշուք լեռները, իսկ ամենից շատ նախընտրում է հայկական լավաշն ու անզուգական ժանգյարով հացը: Ցանկությունը մեկն է՝ մի օր էլ իր ձեռքերով իր Լեհաստանում պատրաստել եւ իր ժողովրդին մատուցել հայկական լավաշը ու դրա բուրմունքը տարածել ծննդավայրում:

Վերջին տարիներին Հայաստանի հարավային դարպասը՝ Սյունիքը եւ հատկապես Գորիսն իր գիրկն է կանչում բոլորին: Ավելին՝ երբ բնությունն իր զմրուխտյա հոլանի թեւերն է փռում սյունյաց լեռներին, ու ամառն է իր թելիկ-մելիկ շարժուձեւով այցելում, ապա ոչ ոք չի կարողանում անտարբեր մնալ զանգեզուրյան պերճախոս խաղերի նկատմամբ: Ու... ձգում է այս երկիրը մագնիսի նման, ձգո՜ւմ տանում է Տաթեւի վանք, ուր ասես բյուրեղացած հավերժական մի պատմություն կա, մի պայծառ թախիծ եւ մի հանդարտ տրտմություն... Հետո նրանց կանչում են վեհաշուք Լաստի խութն ու Խնձորեսկը, որտեղ էլ արտահայտված հուզական խռովք կա, որը ոչ թե խռովում, այլ արտացոլված մեղմությամբ հանդարտեցնում է տարագրված տագնապները:

Բնության պատկերավոր կանչին անտարբեր չեն մնում թե հայաստանցի եւ թե օտարերկրացի զբոսաշրջիկները: Նկատենք, որ գրեթե բոլորի առաջին այցելությունը Տաթեւի վանք է, ուր յուրաքանչյուրը հետամուտ լինելով մեծ երազանքին ու փափագին, ցանկանում է իր ձայնը Աստծուն հասանելի դարձնել: Աստծո տանը հարակից է «Սատանայի կամուրջը», ուր գլխապտույտ տեսարանից չես կարողանում գլխի ընկնել սկիզբն ու վերջը պատկերի, եւ նայելիս թվում է, թե ջրվեժն ուշաթափվում է .... Իսկ ներքեւում տաք ջուրն է, որն ասես սրբում է փոշին դարերի եւ իր անվանը հակառակ ամռան շոգից զովացնում:

Զբոսաշրջիկներին անտարբեր չի թողնում նաեւ «Տաթեւեր» ճոպանուղին, որի երկարությունը 5700մ է, իսկ ամենաբարձր տեղը՝ 330մ: Թեեւ ճոպանուղին մեկնարկել է ամառային շրջանը, այնուհանդերձ, առջեւում թեժ երկու ամիս դեռ կա: Այս օրերին «Տաթեւեր»-ը սպասարկում է օրական մոտ 300-400 այցելուի, որոնց թիվը հանգստյան օրերին կրկնապատկվում է, իսկ հուլիս-օգոստոս ամիսներին՝ եռապատկվում ու քառապատկվում:



**Մայքլ Պոլեցկի**

Զբոսաշրջիկների հաջորդ կանգառը Խնձորեսկ գյուղում կառուցված ճոճվող կամուրջն է, որն իրար է կապում հին ու նոր գյուղերը: Այն կառուցվել է խնձորեսկցի գործարար Ժորա Ալեքսանյանի ջանքերով ու հովանավորությամբ: Կամուրջը կշռում է 14 տոննա, իսկ երկարությունը 160մ է: Հսկա ճոճանակի վրայով միաժամանակ կարող է անցնել 700 մարդ: Զբոսաշրջիկներին գերում է նաեւ Գորիս գյուղը, ուր վսեմաշուք ժայռերի մեջ իրենց կացարաններն են կառուցել մեր նախնիները: Այսօր այդ քարերի ու ժայռերի մեջ բնակություն է հաստատել գորիսեցի Գոռ Վարդանյանը: Գոռն ուժով չզիջելով իր անվանակցին, փորել է ժայռը՝ համատեղելով հինն ու ժամանակակիցը, կառուցել է դրախտի իր անկյունը: Այս ընտանիքը գրեթե ամեն օր հյուրեր է ունենում: Այցելուները գալիս են, զմայլվում բնության հրաշքով, մի քանի րոպե վայելում քարանձավում բնակվելու հաճույքն ու հեռանում բարեմաղթանքներ ասելով: Գոռն այնտեղ ապրում է կնոջ՝ Թամարայի եւ դստեր՝ Էլենի հետ: Հպարտ է. տունը կառուցել է, ծառը տնկել, իսկ քարանձավում հնչում է վեցամյա փոքրիկի ուրախ ծիծաղը: Ավելին՝ վստահեցնում է, որ իր տուն-քարանձավը չի փոխի երեք սենյականոց բնակարանի հետ:

Իսկ Գորիսի զբոսաշրջության գրասենյակը հատուկ առաքելություն ունի: 2007թ. Վիեն-Գորիս համագործակցության շրջանակներում ստեղծված այս կառույցը տարվա կտրվածքով ընդունում է մոտ 500 հյուր, զբոսաշրջիկներին տրվում են անվճար տեղեկատվություն, ուղեցույցներ, իսկ ցանկացողների համար կազմակերպվում նաեւ այցեր տարբեր տեսարժան վայրեր: Գրասենյակի տնօրեն Վարդուհի Ադունցը մայիս-հոկտեմբեր ամիսները համարում է զբոսաշրջության համար նպաստավոր ժամանակաշրջան: Այս տարի գրասենյակն ունի նաեւ անակնկալ: IRAPA PLATFORM-ի շրջանակներում այսուհետ զբոսաշրջիկների համար կազմակերպվում է Գորիս-Գեղարքունիք-Գորիս շրջայցը: Վարդուհի Ադունցը նշում է, որ հիմնականում զբոսաշրջիկների մեկ երրորդ մասն է այցելում իրենց, քանի որ տեղեկացված չեն գրասենյակի գործունեության մասին: Ավելին, եթե իրենք իրենց հյուրերին տրամադրում են հյուրանոցների եւ հյուրատների ցանկը, ապա մյուս զբոսաշրջիկներն իրենք են փնտրում ու գտնում հարմար սենյակներ: Գորիսում գործում են «Միրհավ», «Օլիմպիա», «Կյուրես», «Քրիստի», «Լարա», «Եղեւնուտ», «Մանա», «Արարատ», «Դիանա» եւ «Զանգեր» հյուրանոցներն ու «Անդրանիկ», «Խաչիկ Միրաքյան», «Գորիս», «Lyova & Sons», «Վիվաս», «Նար-Վար», «Աննա» հյուրատները: Հյուրեր ընդունում են նաեւ ընտանիքներ, ովքեր իրենց հարկի տակ են առնում ավելի մատչելի սենյակ փնտրողներին:

Ասում են, ով չի տեսել Գորիսը, չի տեսել աշխարհ: Այդ ի նկատի ունենալով մոտ 20 հազար բնակչություն ունեցող քաղաքը վերջին տարիներին ավելի ակտիվորեն է պատրաստվում հյուրեր դիմավորելուն: Պատրաստվում է, լայն բացում դարպասներն ու դռները եւ սյունեցուն հատուկ հյուրընկալությամբ ի լուր աշխարհի հայտարարում՝ համեցեք, սպասում ենք....

■

# Ցուցահանդես-վաճառք՝ Տաթեւում



**ԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

**Տաթեւ եկող զբոսաշրջիկին գրավել ոչ միայն աշխարհի ամենաերկար ճոպանուղով, Տաթեւի վանական համալիրով ու շրջապատի հարուստ բնությամբ, այլեւ սյունեցի վարպետների ձեռքի աշխատանքներով, որոնք շատ բան ունեն պատմելու հայի եւ հայկական մշակույթի մասին:**

«Տաթեւի արհեստավորաց թեւ» մշակութային հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ զբոսաշրջիկների ակտիվ հոսքի շրջանում ամեն շաբաթ եւ կիրակի Տաթեւի վանքին հարակից տարածքում կգործի ցուցահանդես-վաճառք: Բացումը կայացավ հունիսի 22-ին Տաթեւ գյուղի մանկապարտեզի տարածքում: Ներկայացված էին փայտագործ, խեցեգործ, ասեղնագործ, հելունագործ աշխատանքներ, նաեւ գեղանկարներ:

**«Սա լավ նախաձեռնություն է, առիթ, որ Սյունիքի արվեստագետներն իրենց շնորհքը ցույց տան արտասահմանից եկած հյուրերին, ծանոթացնեն նրանց մեր մշակույթին»,** – ասում է գեղանկարիչ Վոլոդյա Հովհաննիսյանը, թեեւ համոզված է՝ զբոսաշրջիկին ոչ թե գեղանկարները, այլ ավելի շատ հուշանվերներն են գրավելու: Իր ներկայացրած 11 աշխատանքում Սիսիանի պատմամշակութային կոթողներն են, բնության գեղեցկությունները, ծաղիկները...

Նկարչուհի-խեցեգործ Ժենյա Գրիգորյանի կարծիքով՝ **ստեղծագործողը միշտ պետք է շփվի մարդկանց հետ, դրա արդյունքում է, որ ճաշակը հղկվում է, աշխատանքները՝ կատարելագործվում: Մենք պիտի ձգտենք ներկայացնել մերը՝ հայկականը՝ սկսած հին խեցեգործական արվեստից մինչեւ մերօրյա մշակույթ:**

Մասնագիտությամբ ինժեներ, կոչումով փայտագործ-վարպետ Վարուժան Դոլարյանը մայրաքաղաքից է եկել: Խոստովանում է՝ **իր պատրաստած մոմակալները, զարդատուփերը հետաքրքրեցին զբոսաշրջիկներին: Դրանցից մի քանիսը շատ արագ վաճառվեցին: Հեռավորության պատճառով ինքը հաճախ չի կարող մասնակցել ցուցահանդեսներին, բայց սա գեղեցիկ հնարավորություն է համարում թե՛ զբոսաշրջիկների եւ թե՛ ստեղծագործողների համար:**

**– Յուրաքանչյուր շաբաթ կներկայանանք նոր ասելիքով ու նոր աշխատանքներով,** - նշում է «Տաթեւի արհեստավորաց թեւ» մշակութային հասարակական կազմակերպության հիմնադիր նախագահ Դերենիկ Եփրեմյանը: – **Տաթեւ համայնքի մանկապարտեզի շենքը վարպետաց տուն-համալիրի կվերածվի, որտեղ կգործեն արհեստանոցներ, տաղավարներ... Զբոսաշրջիկները կգան, կմասնակցեն նաեւ աշխատանքին,**



**ինչով ավելի հետաքրքիր կլինի նրանց օրը:**

Մանկապարտեզի շենքը վարպետաց տան վերածելու շուրջ Տաթեւ համայնքը տվել է իր համաձայնությունը: Հիմա հովանավորներ են փնտրում՝ էսքիզներն իրականության վերածելու համար: Մինչ այդ փորձելու են ցուցադրությունները համապատասխանեցնել միջազգային պահանջներին: Զբոսաշրջիկներին ճիշտ ներկայանալու հարցում տեղացիներին կօգնի հոլանդացի կամավոր, PR մասնագետ Հանս Սիջսը: **«Այս միջոցառումն ինձ համար եւս նորություն է,** – ասում է նա, – **ես խոսել եմ կազմակերպիչների հետ, եւ այժմ փորձում եմ օգնել նրանց՝ գրավելու ավելի շատ զբոսաշրջիկների»:** Հանս Սիջսն առաջին անգամ է Հայաստանում, սակայն արդեն համոզվել է՝ **հնագույն մշակույթ ունեցող մեր երկիրը հրաշալի հնարավորություններ ունի զբոսաշրջության զարգացման համար: Սակայն աշխարհին ճիշտ ներկայանալու հարցում դեռ շատ անելիքներ կան:**

■

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ■ ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ
ՇԱԲԱԹ ● 29 ՀՈՒՆԻՍԻ 2013Թ ● № 18 (291)

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՀՀ կրթության եւ գիտության նախարարության «Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը (նախկին մանկավարժական ուսումնարան) հայտարարում է 2013-2014 ուսումնական տարվա ընդունելություն առկա (ստացիոնար) ուսուցմամբ հետեւյալ մասնագիտություններով**

| NN | Ծածկը | Մասնագիտությունը | Առկա ուսումնառության տեւողությունը (տարի) | | Որակավորումը | Տարեկան ուսման վարձը (դրամ) |
|---|---|---|---|---|---|---|
| | | | Հիմնական ընդհանուր կրթության հիմքով | Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության հիմքով | | |
| **Մասնագիտություններ՝ ըստ միջին մասնագիտական կրթական ծրագրերի** | | | | | | |
| 1 | 0301 | Հայոց եւ օտար լեզուների դասավանդում | - | 4 տարի | Հայոց եւ օտար լեզուների ուսուցիչ | 100,000 |
| 2 | 0307 | Ֆիզիկական կուլտուրա եւ սպորտ | - | 3 տարի | Ֆիզիկուլտուրայի ուսուցիչ (մարզիչ) | 100,000 |
| 3 | 0313 | Նախադպրոցական կրթություն | - | 2 տարի | Նախադպրոցական տարիքի երեխաների դաստիարակ | 100,000 |
| 4 | 0402 | Մանկաբարձական գործ | 4 տարի | 3 տարի | Մանկաբարձ | 120,000 |
| 5 | 0405 | Դեղագործություն | 3 տարի | 2 տարի | Դեղագործ | 120,000 |
| 6 | 0406 | Քույրական գործ | 4 տարի | 3 տարի | Բուժքույր | 120,000 |
| 7 | 2203 | Հաշվողական տեխնիկայի եւ ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում | - | 3 տարի | Տեխնիկ | 120,000 |
| 8 | 2307 | Զբոսաշրջություն | - | 2 տարի 6 ամիս | Զբոսաշրջության ծառայությունների մասնագետ | 120,000 |
| **Մասնագիտություններ՝ ըստ նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրերի** | | | | | | |
| 1 | 2304 | Վարսավիրական արվեստ եւ զարդային դիմահարդարում | - | 1 տարի | Վարսահարդար | 80,000 |
| 2 | 2907 | Ատաղձագործական, մանրահատակագործական, ապակեգործական աշխատանքներ | 3 տարի | - | Հյուսն, ատաղձագործ | անվճար |
| 3 | 2311 | Հասարակական սնունդ | - | 1 տարի | Խոհարար | անվճար |

Ծանոթություն՝ ընդունելության կարգին առնչվող հարցեր լինելու դեպքում դիմել ընդունող հանձնաժողովին:
Մեր հասցեն՝ Գորիս, Ավանգարդ 4: Կայք՝ http://gorispetcollege.do.am
Հեռախոսահամարներ՝ (0284) 2-01-85, 2-28-42, (098) 10-10-96:

# Կցանկանայինք, որ այս գործընթացը լիներ շարունակական

**ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ**

**ԷՎԵԼԻՆԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ**



Հասարակական կյանքում լիարժեք հաղորդակցվելու համար անչափ կարեւորվում է մայրենիի անթերի իմացությունը: Մայրենի լեզուն առանձնահատուկ տեղ է գրավում կրթության մեջ, քանի որ այն ե՛ւ ուսումնասիրության առարկա է, ե՛ւ մյուս առարկաների յուրացման միջոց:

Կրթության ազգային ինստիտուտի Գորիսի մասնաճյուղը հունիսի 4-18-ը Սիսիանի ավագ դպրոցում անցկացրեց ատեստավորման ենթակա ուսուցիչների հերթական վերապատրաստման դասընթացը: Դասընթացին մասնակցում էին Սիսիանի տարածաշրջանի հանրակրթական դպրոցների հայոց լեզու եւ գրականություն դասավանդող ուսուցիչները:

Տասնօրյա դասընթացի ընթացքում մանկավարժներին հիանալի հնարավորություն ընձեռվեց կատարելագործել նախնական գիտելիքներն ու հմտությունները տեղեկատվական եւ հաղորդակցման տեխնոլոգիաների կիրառման ոլորտում, ավելին՝ կիրառել ՏՀՏ-ն՝ որպես դասավանդման եւ ուսուցման այլընտրանքային միջոց, նրա կիրառումը դասապրոցեսում, ինչպես նաեւ՝ հիմնավորել իմացությունը նոր մեթոդներով դասերի կազմակերպման՝ կրթության պետական չափորոշիչների, կրթության բովանդակության արժեհամակարգին համապատասխան: Դասընթացը վարում էր ԿԱԻ Գորիսի մասնաճյուղի դասընթացավար Նելլի Ղուշունցը, ով բարեխղճորեն, բարձր մակարդակով եւ առանձնակի վարպետությամբ անցկացրեց այն՝ ուսուցիչներին զինելով հանրակրթական ծրագրերի, ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի եւ դրանց համապատասխան ուսուցման կազմակերպման ձեւերի, միջոցների մեթոդներով, որոնք, անշուշտ, կնպաստեն դասապրոցեսն էլ ավելի արդյունավետ կազմակերպելու, աշխատանքային գործունեությունն առավել հնարամիտ, արդյունավետ դարձնելու համար:

Անչափ տպավորված էին դասընթացի մասնակից ուսուցիչները, որոնցից մի քանիսը որոշեցին հայտնել իրենց տպավորությունները:

- Ինչպես նույն պատկերին նայելիս տարբեր մարդիկ տարբեր կերպ են արձագանքում, այդպես էլ այս վերապատրաստման դասընթացից ամեն մեկն իրեն հուզող եւ հետաքրքրող ինֆորմացիան կարող էր ստանալ, եթե ի սկզբանե նպատակադրված լիներ օգտակար դասեր քաղել պարապմունքներից: Ըստ իս՝ տասնօրյա դասընթացում ձեռք բերած գիտելիքներն ինձ հնարավորություն կտան էլ ավելի արդյունավետ, հետաքրքիր ու նպատակային կազմակերպել յուրաքանչյուր դասաժամ, - իր գնահատականը տվեց Նորավանի միջնակարգ դպրոցի մայրենի լեզվի ուսուցչուհի Ռոզա Միրզոյանը:

Իսկ ահա թե ինչ դասեր քաղեց Բռնակոթի միջնակարգ դպրոցի հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի Գայանե Ղազարյանը. «Ուսուցիչը յուրաքանչյուր դասընթացից, անշուշտ, ունի ակնկալիքներ: Բացառություն չէ նաեւ այս դասընթացը, ինչն ինձ տվեց նոր գիտելիքներ, օրենքների, նորագույն մեթոդների ու կրթական տեխնոլոգիաների իմացություն: Այս դասընթացի շնորհիվ ես ձեռք բերեցի նոր բարեկամներ, ինչի համար անչափ ուրախ եմ»:

Ուսուցիչներն ավելի քան համոզված էին, որ հանրակրթության ոլորտում առկա խնդրահարույց հարցերի լուծումն այսուհետ իրականություն կդառնա ԿԱԻ Գորիսի մասնաճյուղի եւ մանկավարժների սերտ համագործակցության արդյունքում:

Հուսանք, որ այս գործընթացը հաստատակամորեն շարունակելու է ուսուցիչների վերապատրաստման առաքելության երթը՝ ի շահ մանկավարժների հզոր բանակի, եւ որ այն ոչ միայն ցանկալի, այլեւ անհրաժեշտություն կլինի յուրաքանչյուր ուսուցչի համար:

Աներկբա, սույն հոդվածի տակ իրենց ստորագրությունը կթողնեին դասընթացի մասնակից բոլոր ուսուցիչներն անխտիր (այդ թվում եւ տողերիս հեղինակը, ով եւս վերապատրաստվողների թվում էր) եւ կհայտնեին իրենց երախտագիտությունը՝ հավելելով, որ շատ կցանկանային՝ այս գործընթացը լիներ շարունակական:

**ք.Սիսիան**

**ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ** «Սյունյաց երկիր» թերթի խմբագրությունը ցավակցում է Մերուժան Աթայանին (Քաջարան)՝ հոր՝ Լենդրոշ Աթայանի մահվան կապակցությամբ:

**ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ** «Սյունյաց երկիր» թերթի խմբագրությունը ցավակցում է Յուրի Ջավահիրյանին (Գորիս)՝ հորեղբոր որդու՝ Արա Ջավահիրյանի ողբերգական մահվան կապակցությամբ:

**ՈՒՂՂՈՒՄ** Մեր թերթի («Սյունյաց երկիր», 8 հունիսի 2013թ) «Եկեղեցին երկրորդ կյանք ունեցավ» հրապարակման մեջ սպրդել է անճշտություն՝ Սամվել Փարամազյանի փոխարեն կարդալ Մանվել Փարամազյան: Միաժամանակ՝ եկեղեցու հիմնանորոգմանն ամենօրյա ակտիվ մասնակցություն է ունեցել նաեւ Սամվել Առաքելյանը, իսկ Սենիկ Զեյնալյանը 1 մլն դրամից ավելի ներդրում է կատարել եկեղեցու հիմնանորոգման աշխատանքներում:

Սյունյաց երկիր
ՏԱՍՆՕՐՅԱ ԹԵՐԹ
Գլխավոր խմբագիր՝
ê ²Ø ì ºÈ ²È ºøê ²ÜÚ ²Ü
**Հասցե՝** Կապան, Շահումյան 20/32:
**Հեռախոս՝** (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 06 28 02:
**Էլ.փոստ՝** syuniacyerkir@mail.ru
**Ինտերնետ՝** www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«**ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ**» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 2000, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 28.06.2013թ.:

